



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Պ Ա Յ Ք Ա Ր

ՊՏՂԱԲԱՆՁԱՐԱՐՈՒԹԱԿԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



ՀՈՒՆ 201 ՔԱՂ ԿՈՄԱՏԱՐ—ՊՏՎԱԲԱՆԶՈՐԱԳՈՎԻՇՈԿՆԵՐ ԶՈՒԾ ԿՈՅՆ

ՊԱՅՔԱՐ

ՊԵՂԱԲԱՆԶՈՐԱԳՈՎԻՇՈԿՆԵՐ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Դ.Պ.Բ. Յ Լիգրա

Ա. 1934 թ.

ԱԿ. № 165

Խմբագրեց

ԱՐ. ՅԱ.ՓՈՒԶԵԱՆ



Պատ. իմբազիր՝ Ար. Յափուշյան
Մրբազրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնված և արտադրության 1934 թ. մայիսի 4-ին,
ստորագրված և տպագրության 1934 թ. մայիսի 13-ին:
Գլավլիս № 270, Պատվեր № 254: Տիրաժ 2000
Մեկ տպագր. թերթում 76,800 տառ տպ. ն2.

ՊՏՎԱԲԱՆՉԱՐԱԲՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

17-րդ կուսակցութեան համագումարը գյուղանաեսության զարգացման առաջի իր ամբողջ լայնությամբ դրեց բերքատվության բարձրացման խնդիրը:

Պտղաբուծության և բանջարաբուծության ասպարիզում ևս, վորը հանդիսանում է պյուղանատեսության ամենակարևոր և բարդ ճյուղերից մեկը, ներկայումս հիմնականը՝ բերքատվության, արտադրանքի վորակի բարձրացման խնդիրն է:

Մենք պետք են բարձրորակ թարմ ու վերամշակվոծ պտղուղներով և բանջարեղեններով բավարարենք մեր բանջարության ու կոլտսովային մասսաների աճող պահանջը, ինչպես այդ 17-րդ համագումարում գնում են մեր առաջ ընկ. ընկ. Ստալինը և Կտղանովիչը:

Պտղաբուծական և բանջարաբուծական նոր տնտեսություններում մենք զգալի չափով լայնացրել ենք այդ կուլտուրաների մշակությունը, մասնավանդ քաղաքամերձ գոտում և վերամշակող գործարանների շուրջը: Սակայն անհրաժեշտ և ամենայն խստությամբ նշել, վոր հարցուրավոր հեկտարների յուրացման հետ միասին դեռ մեր տնտեսություններում շատ հետ են մնում վորակական հատկությունները, նրանց կազմակերպչական դրությունը:

Հատկապես պետք է նշել մեր պտղաբուծական տնտեսությունների անբավարար դրությունը մի շարք կտղմակերպչական աշխատանքների գծով.

Տնտեսուրյան յեվ ածխատանիքի կազմակերպումը՝ Արտադրանքի վորակի այդ կարեռագույն նախապայմանը դեռևս չի առանովված մեր պտղաբուծական տնտեսություններում թե խորհունտեսությունների և թե ապրանքային ֆերմաների գնով: Այդ տնտեսություններում պտղատու այդիները գցվում են առանց պայմանների անհրաժեշտ ու բաղմակողմանի ուսումնասիրության Մինչդեռ այդ մասին կա հայաստանի Ժողկոմիորնի վորոշումը՝ թե նուխքան այդին անկելը՝ տեղում պետք և ամենամանրամասն

հետազոտում կատարել, հաշվի առնելով տեղի հողային, կլիմա-
յական պայմանները և վսրոշել պտղատու տեսակներն ու սորտե-
րը, անտեսության զարգացման ուղղությունն ըստ առանձին տա-
րբների, հաշվի առնելով միաժամանակ հողամասի կազմակերպու-
մը, նրա յուրացումը, բանվորական ուժի պահանջը, բերքի իրաց-
ման հնարավորությունները, յենթակա մասնաճյուղի զարգացումը,
այսինքն՝ մի շարք շատ կարենոր անտեսակիտական պայմաններ,
վորոնց հիման վրա յել պիտի կազմել անտեսության զարգացման
պլանն ըստ առանձին տարբների Առանց այդպիսի բազմակողմա-
նի ուսումնական վրա չի կարող լին հիմնավորման չպետք ե թույլ տալ
այնպիսի պատղաբուծական անտեսություններ կազմակերպել վո-
րոնք դրադիում են բազմամյա բռույիրի մշակությամբ, պահան-
ջում են հսկայական կազմական ներդրումներ հետադա առանցակ
տարբների համար:

Պետք է նշել, վոր մեր նոր կազմակերպվող պատղաբուծական
անտեսություններում դեռևս լրիվ չեն կատարված հողաշինարա-
րական աշխատանքները, վորի պատճառով անտեսության զար-
գացման ասպարիցում թույլ են տրվում դգտալի սխաններ:

Այս տարի մեր պատղաբուծական անտեսությունները պետք
ե ավարտեն հողաշինարարական աշխատանքները, առանց վորի
անկարելի յե նրանց հետագա ուղիղ զարգացումը:

Մեր պատղաբանջարարուծական անտեսություններն առա-
հովված են անհրաժեշտ քանակությամբ տրակտորներով ու մե-
քենաներով և պետք է լրիվ ոդտագործեն այդ մեքենաները, ա-
պահովելով նրանց համապատասխան վերանորոգումը:

Շատ հաճախ մեր պատղաբուծական անտեսություններում
անուշագրության են մատնվում մանը կարենոր գործիքների ոգ-
ագործումն ու վերանորոգումը, դանակը, մկրատը, սղոցը, պետք
ե ամենամեծ խնայողությամբ գործածել և ապա վերանորոգել
այդու հետագա աշխատանքների համար:

Աշխատանքի կազմակերպման խնդիրները մեր պատղաբան-
ջարարուծական անտեսություններում լրւելու համար պահանջ-
վում են ամենալուրջ միջոցառումներ Մշտական արտադրական
բրիգադն այդ անտեսություններում պետք է լինի աշխա-
տանքի կազմակերպման հիմնական ողակը: Մինչդեռ մեր
պատղաբուծական անտեսություններում բանվորական ուժի կաղ-
մակերպումը շատ հաճախ հարմարեցվում ե վոչ թե ծառաստան-
ների մշակությանը, այլ նույն անտեսության կողմանը նյուղե-
րին կամ միջարքային կուտուրաներին (հացահատիկների, առ-
վույտի, բանջորդինի ցանքին), իսկ հիմնական կուլտուրան՝ պըտ-
պատու ծառերն անուշագրության են մատնվում:

Այս գարնանը հասուկ ուշադրություն պետք է դարձնել բանվորական ուժի կազմակերպման վրա և վերջ տալ ինքնահասնեն այդ ասպարիգում, ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները պատրաստական տնտեսություններում պահպանելու մշտական բանվորական կազմը, բավարար պայմաններ ստեղծելու նրանց նյութական կենցաղային պահանջները բավարարելու համար, իսկ դրա համար առաջին հերթին պիտի ավարտել խորհանտեսություններում սկսված շինարարությունը, կազմակերպել անգի գործը սեփական տնտեսության աղբյուրներից:

Ազգայտելինիկայի կիրառումը պահարանջարաբուծական տընտեսություններում դեռ չի զբաղել մեր մասնագետների ու զնկազարող ընկերների անհրաժեշտ ուշադրությունը:

Ծեմի 1-ին ճնդամյակում նոր յուրացված հողերում (զւերտում, Սարդարաբաղի 2րդանում) մենք կարողացնք յուրացնել նորանոր արքածություններ, ապա վորակական հատկանիշներն այդ տնտեսություններում զնու շատ ցածր են:

Հայտնի յե, վոր նախ քան ծառերը նոր յուրացված հողերում տնկելը, պետք է նախորոք պատրաստել հողամասը, ավարտել հատակագծումը, խոտարույսեր ցանել, քամուց պաշտպանելու համար պատնեշներ տնկել համապատասխան բույսերից և հետո միայն սկսել այգետուններ: Այդ նախաղարաբաստական աշխատանքը մեր տնտեսություններում չի կիրառվում, տնկինները անկվում են անպատճառ հողամասում, չեն ստանում անհրաժեշտ իննամքը և թույլ դարձացման հետևանքով հաճախ տուժում են, մանավանդ ձմռան ցրտերից, մինչդեռ լավ պահպանված տնկինների վրա ձմռան ցածր չերժուածիքանն այդքան բացասական աղղեցություն չի ունենում:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծառերի տնկման աշխատանքների վրա: Մեր այդիններում շատ հաճախ առողջ տնկինները նույնիսկ չեն կացում, վորովհետև սխալ են տնկվում և նրանց նկատմամբ անհրաժեշտ խնամք չի տարվում: Մեր մի շարք խորհրդական անհրաժեշտ վերջին տարիներս այդ չկամած ծառերի տոկոսը շատ բարձր է (մինչև 30—40 %):

Նախ քան տնկելը պետք է ամենառաջադիր կնքալով կատարել տնկինների գասավորումն ըստ շարքերի տիպերս, վոր ապահովված լինի նրանց դասավորումն ըստ պատղաբերության, պատուղների հասունացման ժամկետների, վոր ամենագլխավորն ե՝ ըստ միայնց փոշոտման հնարավորությունների: Պետք է հիշել, վոր

մեր պաղատու ծառերի մեծ մասն իր սեփական սորտի փաշիով չի բեղմնավորվում և անհրաժեշտ և ապահովել ծառերը փոշոտիչ սորտերով:

Սակայն մեր մի շաբթ տնտեսություններում ամբողջ հողամասում տնկում են մեկ սորտ, որինակ՝ «շալախ» ծիրան, վորուած աճում և, ծաղկում, բայց առանց ուրիշ սորտի փոշոտիչի չի պաղակալում: Այդպիսի որինակներ մենք ունենք կոնսերվատորներ: Խելին սովորում, Սարդարաբազում, Փարաքարում, վորոնց սխալները չսիետք և կրկնել այս գարնանը: այդ մասին կա պաղաբանաջարաբուծական կայանի կողմից մշակված հատուկ ցուցմունքներ, վորոնք պետք և պարտադիր կերպով կիրառել:

Դարձնան ծառատունի համար տնտեսությունները պետք և ապահովին բոլոր նախապատրաստական միջոցները—տնկիները խնամքով տեղափոխեն տնկարանից, մինչ տնկելու արմատները չչորացնեն, տնկման աշխատանքները հանձնաբարեն միայն ուշադիր և այդ աշխատանքներին ծանոթ բանվորներին ու կոլտնանականներին, ապահովեն տնկինների ջրելն անմիջապես անկինուց հետո, ինչպես և հետագա անհրաժեշտ խնամքը:

Այդ կիրառելով մենք կպահպաննենք տնկման աշխատանքների բարձր վորակը, խնայելով թանկարժեք տնկինները, հետևաբար և տասնյակ հաղարներ մեր տնտեսություններում:

Տնկարանային արտադրությունը մեր պատղաբուծական տնտեսությունների ամենալուրջ, կարևոր և ներկայումս Հայաստանի պայմաններում առենահատամաց կողմն է:

Մեր տնկարանները Դարաքիլսայում և Սարդարաբազում դեռ չեն արտադրում անհրաժեշտ ուժեղ, ստանդարտ ձևի և սորտի տնկիններ: Մինչդեռ տնկարանը խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների ապրանքային ֆերմաները պետք և ապահովի առողջ, ստանդարտ տնկիններով:

Տնկարանները պետք և գարնանից իրենց տնտեսություններում կազմակերպեն անհրաժեշտ ցանքաշրջանառությունը, սերմերի ցանքը, նրանց բարձր խնամքը և հատկապես սրեն իրենց ուշադրությունը տնկինների ուղիղ ձևավորման վրա, կիրառելով կառավարական վորոշումներով առաջարկած ուցինուալ ձևավորումը—լիներային սխտեմով: Կոլտնտեսային պաղաբուծական ֆերմանների պահանջը լրիվ բավարարելու համար, մանավանդ մեր, հեռավոր շրջաններում (Զանգեղուր, Դարալազյաղ, Մեղրի, Ղափան) Հաղթողկոմատի ու Պաղաքանջարաբուծական կայանի աջակցությամբ պետք և կազմակերպել կոլտնտեսային անկարաններ:

Քաղաքամերձ տնտեսություններում, ոյս դարնանից հասակապես, պիտք և սրբել ուշագրությունը՝ հոտառառութային և գաճաճ պտղատու բույսերի մշակության վրա:

Այսպիսով մեր տուաջ զրված խնդիրները պատրասնջաբարութական տնտեսության կազմակերպման, նրա վարակի, բերքատվության բարձրացման ասպարիզում շատ մեծ են և մեր խորհունտեսությունների բանվորների ու կոլտնտեսականների են՝ առողջապահով կիրառելով կուսակցություն ու կառավարության վարոշումներն այդ ասպարիզում, կառահովենք պառաղների և բանագործենների բարձր վորակը:

Ա. ՅԱՓՈՒԶՑԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՊՏՎԱԲԱՆԶԱՐՄՐՈՒՄԱԿԱՆ ԽՈՐՀՏՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵԵՎ ԿՈԼՏՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորհ. և կոլեկտիվ տնտեսություններում աշխատանքի կազմակերպման հիմնական ողակը հանգիստնում և արտադրական բըիզագության:

(Համ. Կ (բ) Կ.)

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը պատղարանջարաբուժական խորհը, և կոլտնտեսություններում հանդիսանում և անհրաժեշտ ու զիսավոր պայմանը, վորով հնարավոր և արտագույքի լուծել կուսակցության կողմից առաջազրած խնդիրը, թե կոլտնտեսությունները պիտի դարձնել բոլշեվիկյան, կոլտնտեսականներին՝ ունեոր:

Ներկայումս կոլ. և խորհ. տնտեսության վիճաբառության ասպարիզում աշխատանքի կազմակերպման ռացիոնալ և արտադրական ձեռք բըիզադային ձեն և, իսկ բըիզադային ամենալավ ձեռք մտշական արտադրական բըիզադն ե:

Համ. Կ. (բ) Կ. 1932 թ. վետրվարի 4-ի պատմական վորոշումը նշում ե, վոր մշտական արտադրական բըիզադները գյուղատնտեսական բոլոր աշխատանքներում պիտի ունենան լրիվ աշխատանքի բեռնվածություն և պատասխանառու պիտի լինեն իրենց ամբացված հողամասի բոլոր աշխատանքների ժամանակին կատարմանը Հողամասը բըիզադին ամբացվում և վողջ ցանքաշրջանառության ժամանակաշրջանի համար, իսկ նիշտ ցան-

քաշրջանառությունը, ագրոկամպլեկսի լրիվ կիրառման հետ միասին, առահօղում և պայքարը մալախոտերի գեմ, բանվորական ռեժիսորը և մեքենաների ու գործիքների լրիվ բեռնվածությունն ու ճիշտ ողագործումը, միաժամանակ բարձրացնելով սոցիալիստական դաշտերի բերքատվությունը:

Մշտական արտադրական բրիգադն իր բոլոր աշխատանքների համար ստանալով մեքենաներ, գործիքներ, բանվորական և քաշող ուժ, պատասխանատու յև դառնում պլանային արտադրական առաջադրանքների, ինչպես քանակական, նույնպես և վրակական ցուցանիշների կատարման համար:

Պտղաբաննաբարուծական խորհանակառությունների բանվորների բարձր աշխատավարձը և կոլտնահասականների բարձր յեկամուտ ստանալը կախված է ինչպես ամբողջ բրիգադի, այնպես և նրայուրաքանչուր առանձին անդամի կատարած աշխատանքի քանակից ու վորակեցից: Իսկ այդ ըոլորը կախված է բրիգադայի ներքում աշխատանքը ճիշտ կազմակերպելուց և ժամանակին հաշվառումից: Այսուեղ կարենոր նշանակություն ունի նաև բոլոր սեղոններին աշխատանքով բնունակորպած լինելը վորովհետեւ գա վերացնում և բանուժի հոսունությունը և զիմազրկությունը, իսկ վորտեղ կադիմազրկություն ու հոսունություն, այնտեղ աշխառժանում և դասակարգացն թշնամին, տանելով իր խըլուրդային աշխատանքը թրիգադի արտադրության բնույթի և աշխատանքի ծագալի համեմատ վորոշվում և բրիգադայի անդամերի թիվը և հետո դասավորվում ուժերը բրիգադի ներսում, վորոտեղ լուրջ ուշադրության պիտի դարձնել փորձված և վորոշ աշխատանքներում մասնագիտացած ուժերի ճիշտ դասավորման և աշխատանքների բաշխման վրա: Փորձը ցույց է տալիս, վոր հատկապես պտղաբաննաբարուծական տնտեսառություններում, ժամանակակից այգեզգործության տեխնիկայից և արտադրության պրոցեսի մեջենայացումից յելնելով, բանվորների այն քանակը, վոր կարող է ապահովել բրիգադին ամրացված հողամասի վողջ աշխատանքների կատարումը, պակաս չպիտի լինի 25—30 հոգուց, ի հարկեն, նայած ճյուղին և բնույթին: Բրիգադի անդամների քանակը պիտի ապահովի տվյալ արտադրության բոլոր աշխատանքների կատարումը բոլոր սեղոններում, վորպիսին բղխում և պլանից և բրիգադի առաջադրանքից: Մյուս կարենը խնդիրը, գա բրիգադին ընտրությունն եւ և նրա դերի բարձրացումը, վորպես արտադրության կազմակերպչի: Դրա հետ միասին պետք է պայքարել բրիգադների շուտ շուտ փոփոխման պրակտիկայի դեմ,

վորպիսին դեռ շարունակվում է մեր մի շարք տնտեսություններում: Բրիգադիրը պիտի ընտրվի այնպիսի կողանունակամն, վորն որինակելի յի իր բոլոր աշխատանքներում, կկարողանաւ տիրապետել աշխատանքի կազմակերպման ու դեկավարման տևիթիւնիկային, կեարողանաւ ճիշտ ու ժամանակին կատարել աշխատանքների հաջափառումը և ժամանակին զրանցի աշխարհը կողանունակամնների աշխափառույթին համապատասխան պատարանչարաբուծական աշխատեսություններում: Հատկապես պատարանչարաբուծական աշխատեսություններում բրիգադիրը պիտի լինի փորձառու և վորոշ չափով ժամանակիսացած կողանական աշխատանքներն ավելի շատ են ու դեկավարման տեսակետից համեմատարար ամելի դժվար: Մշտական արտադրական բրիգադիրն ամրացվում է վորոշ քանակի հողամաս՝ իր կուլտուրաներով, պահանջվում է պլանով նախառենիված արտադրանքը, իսկ այդ կատարելու համար անհրաժեշտ է այդ բրիգադային տալ պահանջվող քանակի քաշող ուժ, գործիքներ և անամնիքամեջ նյութեր:

Ներկայում քաշող ուժը մեծ տեղ է գրավում կող: Այսորության արտադրության մեջ, վորի մասին, շատ ճիշտ կերպով նշել ե ընկերությունը՝ 17-րդ կուս: Համագումարում ցոյտողատնտեսության մեջ դեռ կան աշխատանքի մի շարք բնագավառներ, վորանդ կենդանի քաշող ուժի դերը մեծ և և հատկապես ձին յերկար ժամանակ մնալու յի տրահարի հավակտորիմ ընկերության համար անհրաժեշտ է, վոր կող, վարչություններն ու խորհունտեսությունների դիրքեկտորներն ել ամենա լուրջ ուշադրություն դարձնեն կենդանի քաշող ուժի խնամքի—ոգտագործման վրա: Քաշող ուժը կցենով բրիգադներին, պիտի ամելի սրբել պատասխանատվության խնդիրը՝ նրանց խնամքու և ողտագործելու տեսակետից:

Ճիշտ կերպով քանիվորներով ու քաշող ուժով կոմպլեկտավորված բրիգադան, վորն ապահովված է նաև գործիքներով ու անհրաժեշտ նյութերով, պիտի ունենա իր աշխատանքների որացուցային պլանն ամբողջ տարվա համար:

Պլանում ցույց պիտի տրված լինի արտադրական առաջնադրանքը, աշխատանքի ծավալը, արտադրական նորմաները, առանձին նյութերի ծախսման նորմաները, ստացվելիք ընդհանուր յեկամուտը, ազգութեանիկայի կիրառման ժամկետները, պարարտացումը և այլն, և այն:

Ցերեկին պատարանչարաբուծական տնտեսություններում բանութը և քաշող ուժը բրիգադների մեջ բաշխելիս, մեխանիկական մոտեցում են ունենում և ուժերը բաժանում են հավասար քսա-

ըրիգաղների: Հետևանքը լինում է այն, վոր աշխատանքների լինում շրջանում բրիգադներում ստեղծվում է ուժերի անհավասար ըետնվածություն—մեկ բրիգադում աշխատանքի լրացվածություն, բան. և քաշող ուժի անհամեմատ մեծ պահանջ, մյուս բրիգադում հակառակը, ուժերի պարապուրդ և իրավացի դժգոհություն: Այդ ժամանակ զերեկցիան կամ վարչությունը ստեղծված են լինում մի բրիգադից ուժերը տեղափոխել մյուս բրիգադը, իսկ այդ հաճախակի փոփոխություններից առաջանում է դիմադրկություն, հոսունություն, արտազրողականության անկում և մի շարք այլ բացասական յերեսույթներ, վորը կոպիտ կերպով խախտում են պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ ընկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքները Նման գրությունն սդատագործելով՝ գտանձարդային թշնամու վերջին ննացորդների թափթփուկներն իրենց ազգեցության տակն են գյում դասակարգային զգոնությունը քիթացած անձնավորություններին և վերջին հիգերը թափելով՝ կազմակերպում են զանազան վնասարարական ու հականդադիմության աշխատանքներ:

Վերոհիշյալ յերեսույթներն արմատախիլ անելու համար անհրաժեշտ են բան, և քաշող ուժերի բաշխման ժամանակ ճիշտ և որյեկտիվորեն հաշվի առնել ամեն մի բրիգադի աշխատանքի ծավալը, ընույթը, բանուժի պահանջը, բանվորների մասնագիտացումը և գրանց բեռնվածությունն աշխատանքի բոլոր սեղոններում ըստ բրիգադների մասնագիտության:

Սոցիոլիստական անտեսությունները կազմակերպչորեն ու տնտեսապես ամրացնելու և աշխատանքային դիսցիպլինան ել աշխատելի բարձրացնելու խնդրում, խողոք նշանակություն ունի նաև բրիգադներում գործակարձի ճիշտ կազմակերպումը: Գործակարձը պողաբուծական տնտեսություններում ճիշտ կլինի այն գեպքում, յերբ ճիշտ մշակած կլինեն արտադրական նորմաները, ժամանակին ու ճիշտ հաշվի առնվազ կլինեն կատարված աշխատանքները, ստուգված վրակը, և ժամանակին դրանցված կլինի համապատասխան գրքույկներում, վորպեսզի ամեն մի աշխատավորի համար պարզ մնի իր կատարած աշխատանքն ու իրեն հասանելիքը (կոլտնտեսականի համար՝ աշխարը, իսկ խորհումտեսության բանվորի համար՝ աշխատավարձը): Այդ բոլորն ավելի մեծ շահագրգովածություն են առաջացնում աշխատողների մեջ և նրանք ավելի ջերմ կերպով ու յեռանդով են լծված ալիանների կատարման-գերակատարման դրձին, բարձրացնելով իրենց աշխատանքի արտազրողականությունը, միաժամանակ ել ավելի յեւ ուժեղանում պայքարը լողերի, սիմուլյանտների և ձրիակերների գեմ:

Աշխատանքի կազմակերպման ժամանակ հարկավոր և մեծ ուշադրություն դարձնել արտադրական նորմաների հշտման վրա այնպիս, վոր այն բզիսի ավագալ արտադրության կոնկրետ պայմաններից և առջի չունենա աջնօրների ու գրամական միջոցների շըռուած, վորը մեծապես աղջում և ինքնարժեքի իջնցման ու արտադրողականության վրա և խփում տնտեսության ամրացմանը:

Հարկավոր և յեղած արտադրական նորմաները անտեսանմյուններում ակտիվի խորհրդակցություններում քննության առնել մտնամասնորեն, յեխելով առանձին աշխատանքների կոնկրետ պայմաններից և ՄՏԿ-ների ու հողբաժնների կողմից հաստատենաց հետո միայն կիրառել: Պաղաքանչորարուծական արնեանություններում աշխատանքները կազմակերպելու հաջողաւթյան գրավականը հանդիսանամ է՝

Ա.) աշխատանքի սոցիալիստական ձևերի (սոց. մըցում, հարգածայնություն և այլն) ծավալումը բըհոգում—ցեխում, ողակում և առանձին անդամների միջն, վորպիսին պիտի դառնա յուրաքանչյուր աշխատավորի սեփականություն:

Բ.) համաշխարհային պրոլուտարիատի հանճարեղ տառջնորդը ընկ. ՄՏԱՀԻՆԻ պատմական վեց ցուցումների ճշշտ կիրառումը և վերջապես ամենուրյա համար պայքարը կուլտակալին-յենթակուլակային տարրերի, լողբերի և սիմուլանտների գեմ: Սբանց հաջող կատարումով կապահովենք յերկրորդ հնգամյակի բոլշևիկյան յերկրորդ գարնանացանք պլանների ել այինի հաջող կատարումը:

ՀԱԿՈԲՅԱՆ ՊԱՐԳԵՎ, ՅԵՎ,
ԴՅՈՒԶՈԼՅԱՆ ԿԱՐՈ

ԹՏՆԱՏՈՒ ՄԱՌԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՅԴՈՒՄ

Պաղատու ծառերի բերքատվության բարձրացումը ներկայիս ամենակարևոր խնդիրներից մեկն ե, վոր դրված և մեր խորհանակությունների ու կոլտնտեսությունների առաջ:

Այդ խնդիրը հաջող լուծելու համար պիտք ե ձեռն արկել միշարք միջոցներ, վորոնք կիրառվելու յեն տնկված հին և նոր տնկվելիք այդիներում:

Եերքատվությունը բարձրացնելու ձեռնորկումներից ամենակարևորն ե տեսակների ու սորտերի ճշշտ շնորություն կատարելն ու գասավորելը հողամասում: Պաղատու ծառերի մեծ մասն

ինքնաբեղմնավորման յենթակա չեն: Որինակ՝ ծալախ ծիրանից նորմալ բերք ստանալու համար, նա պիտի փոշոտված լինի Թաքարդացյուղ, Դյոզանարաթով, Սրութալիքով կամ այլ սորտերի փոշով: Յեղել են դեպքեր, յերք մի սորտից բաղկացած այդիներն անբերք, են մնացել: Ամերիկայում տնկված և յեղել մի այդի, գորի մեջ ծառերի մեծագույն մասը տանձենու մեկ սորտ և յեղել, այդ այդին, չնայած լավ և մշակվել, բայց յերկար տարիների ընթացքում ծաղկել և ու բերք չի տվել, մինչև վոր այնտեղ տնկել են մի քանի այլ սորտի ծառեր:

Անցնելով խողոր սոցիալիստական արդյունաբերական պլատ-դարուծությանը (սահմանափակված ստանդարտ ասորտիմենտով), անհրաժեշտ և ալգիների ծառերն ապահովել համօպատառության փոշոտիչներով, վորոնց սացիոնալ գառավորումով և աղբուտեխնիկական միջոցառումների կիրառումով կարելի յե ապահովել բարձր բերքատվությունը:

Չնայած ծառերի վորոց տեսակներն ու սորտերը ինքնաբերդմնավորման յենթակա յեն, բայց խաչածն փոշոտման զեղութում ավելի լի բարձր բերք են առավել: Եթիներով այս ամենից—պտղառու այդին գցելիս պետք և մտցնել համապատասխան իրար փոշոտող մի քանի վոփիոխակներից բաղկացած կոմքինացիաներ:

Փոշոտիչները պետք են բավարարեն հետեւյալ պահանջներին:

1. Վոչ միայն պետք և լավ փոշոտեն հիմնական սորտը, այլև իրենք իրենց հերթին պետք և փոշոտին հիմնականով, հակառակ զեղութում փոշոտիչները բերք չեն տա:

2. Հիշված սորտերի համար լրիվ ծաղկման շրջանը պետք և լինի միաժամանակ, այլազես փոշոտումը տեղի չի ունենա:

3. Սորտերի ծաղկման տարիները պետք և նույնական համընկնեն, հակառակ դեպքում բերքատվությունը կընկնի:

Հայտնի յե վոր ծառերի պատղաբերությունը լինում և պարբերաբար, այն են մեկ տարվա կամ մի քանի տարիների հաջող բերքին հաջորդում և թույլ բերքատվությունը և այդպես շարունակ:

Յեթե հիմնական սորտը գտնվում և հաջող տարվա շրջանում, իսկ փոշոտիչը վոչ, այդ դեպքում վերջինս հնարավորություն չի ունենում փոշոտումն ապահովելու և գրա հետեւնքով բերքատվությունը ցածը ել լինում:

4. Ըստրած սորտերի բերքատվությունը պետք են սկսվի միւնույն հասակում: ուշ և շուտ բերքատու սորտերը չեն կարող իրար համար փոշոտիչներ համարվել, վորովհետեւ շուտ բերք տվող սորտը չի փոշոտվի, մինչև վոր ուշ բերք ավողը չծաղկի, միաժամանակ՝ շուտ բերք տվողներն ընդհանրապես ավելի կարճատեկանք ունեն, իսկ ուշ բերք տվողները յերկարակյաց են:

Այդ պատճառով 40—50 տարուց հետո, յերբ առաջին սորտն արդեն ծերության պատճառով սկսում է չորանուլ, 2-րդ սորտը, վորը գեռ 20—30 տարի կարող է շարունակել բերքատվությունը, մնալու յև առանց փոշոտիչի—ուժեմն և առանց բերքի:

Այդպիսի անհաջող կոմքինացիաների որինակ կարող է համարվել Շամպանի Ռենեսանսը և Կանդիլ սինապը, վարոնցից առաջինը պաղպարերում է 5—6-րդ տարում, իսկ յերկրորդը 13—15 տարում:

Ծառերը զառավորներու ժամանակ հարկավար և աղահովել մի կողմից լավ փոշոտումը, իսկ մյուս կողմից՝ աշխատանքի կազմակերպումը: Այդ պատճառով սորտերը դասավորվում են շարքերով, աշխատելով տանն մեկ սորաբին հատկացնել մի քանի շարք: Շարքերի քանակը 6-ից ավելի չպիտի լինի, այն եւ այն ծառերի համար, վորոնց տնկվում են 6—7 մետր հեռավորության վրա, իսկ վորոնք տնկվում են 10 մետրի վրա 4—5 շարք պիտի լինեն:

Հարկավոր և միաժամանակ հիշել, վոր լավ փոշոտումն աղահովվում և այն ժամանակ, յերբ այդում կան մեղուներ, ոյդ պատճառով հանձնարարվում և այն բոլոր տնտեսություններին, վորոնք մեծ տարածությամբ պաղպատու այդիներ ունեն՝ հնարավարության սահմաններում ունենալ նաև մեղվանոց, կամ հակառակ դեղքում, դոնե ծաղկման շրջանում, պայմանավորվել մեղվաղահների հետ, վոր իրենց փեթակները բերեն այդին:

Ծառերի լրիվ փոշոտումը բարձր բերքատվության հիմքն եւ ով աշքաթող և անում այդ խնդիրը, նա լնասարարական գործ և կատարում—իջնցնելով մեր սոցիալիստական տնտեսությունների այդիների բերքատվությունը:

5. Փոշոտաիչ սորտը պետք է մտցնել ստանդարտ ասորտիմենտի մեջ, վորպեսզի հողամասն սպասադրմամբ ռացիոնալ ձեռվ:

6) Ցանկալի յե փոշոտիչը և փոշոտվողը միևնույն կամ մոտիկ հասունացման ժամանակաշրջան ունենան, վորպեսզի խնամքը և բերքահավաքը հիշտացվի. ամառային սորտը պետք է ունենա համապատասխան հասունացում ունեցող փոշոտիչ, որինակ խնձորների սորտերից Պապիրովկան և Դլուգերովկան: Թանի վոր սորտերի բոլոր հատկությունները հայաստանի պայմաններում լրիվ ուսումնասիրված չեն, պետք է համարել անթույլատրելի նույն հողամասում տնկել միայն յերկու սորտ: Անհրաժեշտ է միևնույն հողամասում տնկել 3—4 փոխագարձ լավ փոշոտող սորտեր, այլապես բերքատվությունը լրիվ չի ապահովվի: Սորտերի դասավորման ժամանակ կարող ենք պատահել մի քանի դեղքերի:

1. Յերբ փոշոտվողը և փոշոտիչը հագասար $0|_0$ -ով են զերցըած: Այդ դեպքում կարելի յե դաստվորել 4—5 շարք մի սորտից, վորոնց հաջորդում են 4—5 շարք 2-րդ սորտից, հետո յերբուրգ և այդպես շարունակվում են:

Որինակ՝ 4 շարք մենատ Սիմիրենկո

4 շարք վուկե Պարմին

4 շարք լանդսբերգի

2 դեպէ, յերբ փոշոտողն անհագասար $0|_0$ -ով ել լինում: այդ դեպքում շարքերի քանակը պիտի համապատասխանի սորտերի հետեւյալ $0|_0$ -ային հարաբերությանը (աեւ սխեման):

+ 0 0 — + 0 0 — 25 $0|_0$ Սիմիրենկո (+)

+ 0 0 — + 0 0 — 50 $0|_0$ Պարմին (O)

+ 0 0 — + 0 0 — 25 $0|_0$ լանդսբերգ (-)

+ 0 0 — + 0 0 —

Նման որինակներ կարելի յե շատ բերել, սխեմայի ընտրությունը կախված եւ տվյալ տնտեսության ասորախմենտից:

Սյսպիսի դասավորումները հնարավորություն են տալիս բերքահավաքի և ինամըքի ժամանակ աշխատանքը ճիշտ կազմակերպել:

Ի նկատի ունենալով, վոր պտղատու ծառը հանդիսանում երազմամյա կուլառութա և այն սխալը, վոր կատարվում եւ այգին տնկելու ժամանակ, անդրադարձում ե յերկար տարիների ընթացքում, պետք և շատ զգուշ լինել սորտերի ընտրության գործում և նրանց դասավորումը ճիշտ կատարել: Ըստի տռաջարկվում ե բոլոր տնտեսություններում ստույդ հետեւյալ Պազարանջարաբուժական կայանի կողմից մշակված և համապատասխան մարմինների կողմից հաստատված Հայաստանի շրջանների ստանդարտ սորտիմենտին:

Հրավիրում ենք տնկարանների մասնագետների ուշագրությունը՝ համապատասխան տնկիներով ապահովելու արտադրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա.ՍՈՐՏԻՄԵՆՏԻ ՓՈՇՈՒԶՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ

ՓՈՇՈՒՑՎՈՂՆԵՐ

Խնձորեն

Անտոնովկա

Բորովինկա, Գլոգերովկա, Պապիրովկա, Զըմեռվա վուկե Պարմին:

Բ ո յ կ ե ն

Գլոգերովկա, Ռ. Սիմիրենկո, Ռ. լանդսբերգ, Ռ. կասելսկի, Ռ. Որլյանի, Զմեռվա վուկե Պարմին, Պեպին լոնդոնի, Բելֆոր, Պապիրովկա:

Բորսվինկա	Անտառովկա, Գլոգերովկա, Պաղերովկա, Բելիցորովկա
Գլոգերովկա	Պապիրովկա, Բոյկեն, Բ. Լանդսբերգ, Անտոնովկա, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բ. Սիմիրենկո և Բ. Շամպանի Բորովինկա, Բ. Լանդսբերգ, Գլոգերովկա, Բ. Սիմիրենկո, Անտոնովկա, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բոյկեն
Պապիրովկա	Բոյկեն, Գլոգերովկա, Պապին Լոնգոնի, Բ. Կասելսկի, Բ. Լանդսբերգ, Բ. Որյանի, Բ. Սիմիրենկո, Բ. Շամպանի, Բելֆլյոր, Զմեևվա Վասիլի Պարմենի, Պապիրովկա, Բորովինկա
Զմեևվա Վասիլի Պարմենի	Բոյկեն, Գլոգերովկա, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բ. Լանդսբերգ, Բ. Որյանի, Բ. Սիմիրենկո, Բ. Շամպանի:
Բ. Կասելսկի	Բոյկեն, Գլոգերովկա, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բ. Լանդսբերգ, Բ. Սիմիրենկո, Պապիրովկա:
Բ. Լանդսբերգ	Բոյկեն, Գլոգերովկա, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բ. Սիմիրենկո, Բ. Շամպանի, Պապիրովկա:
Բ. Որյանի	Բ. Սիմիրենկո, Ունկա Շամպանի, Բելֆլյոր:
Բ. Սիմիրենկո	Բոյկեն, Գլոգերովկա, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բ. Լանդսբերգ, Բ. Որյանի, Բ. Սիմիրենկո:
Բ. Շամպանի	Բոյկեն, Զմեևվա Վասիլի Պարմենի, Բելֆլյոր, Բ. Որյանի, Բ. Շամպանի:
Բելֆլյոր	Բոյկեն, Ունկա Շամպանի, Բելֆլյոր:
Բ. Կոկսա	Մասամբ Կոկսա, իսկ փոշոտիչներն ստուգված չեն:
Տաճա	
Իլինկա	Ալեքսանդրովկա:
Սիրելի Կլապպա	Իլինկա, Ամեևվա Վիլյամս, Բելքերոսկ, Սենժերմեն, Բերեհարդենպոն, Զմեևվա Դեկանկա, Դյուշեն Դանգուլեմ:

Ամառվա Վիլյամս
 Բերեբոսկ
 Ալեքսանդրովիլա
 Սենժերմեն
 Կյուրի
 Բերեհարդենպոն
 Մեյտեն
 Ջուզեպ
 Զերեհարդենպոն
 Ալյանսց Կիֆերա
 Դյուշեն Դանգուլեն
 Զմեռվա Դեկտնկա
 Մալաչա
 Շաքարի
 Լատանձի
 Զագանատանձ
 Զմեռնուկ
 Աղնան սինի
 Բերե-Ամանի
 Իդիլ արմուդ
 Խթթի տանձ
 Կեռասենի
 Դեղին Դըռքանա
 Դեղին Դենիսենա
 Վաղահանս Մարկի
 Դըռլյա
 Սև Նապոլեոն
 Սև Թըքական
 Բերեբոսկ, Կլասպա, Սենժերմեն, Կյուրե,
 Բերեհարդենպոն
 Կլասպա, Ամառվա Վիլյամս, Սենժերմեն,
 Կյուրե, Բերեհարդենպոն, Զմեռվա Դեկտնկա
 Ամառվա Վիլյամս, Կլասպա
 Բերեբոսկ, Կյուրե, Բերեհարդենպոն, Զմեռվա
 Դեկտնկա, Ամառվա Վիլյամս, Կլասպա
 Բերեբոսկ, Սենժերմեն, Բերեհարդենպոն,
 Դյուշեն Դանգուլեն, Զմեռվա Դեկտնկա, Կլասպա, Ամառ
 վա Վիլյամս
 Ամառվա Վիլյամս
 Սենժերմեն, Հարդենպոն, Մեյտենց Կիֆե
 րա
 Բերեբոսկ, Սենժերմեն, Բերեհարդենպոն,
 Կլասպա, ամառվա Վիլյամս

Փոշոտիչներն ստուգված չեն

Դըռլյա, Ֆրենսիս, Վաղահան Մարկի
 Դըռգանա Դեղին, Ֆրենսիս, Դըռլյա, Վաղ
 ահանս Մարկի
 Դեղին Դենիսենա
 Վաղահանս Մարկի
 Դըռլյա
 Սև Նապոլեոն
 Սև Թըքական
 Դըռլյա, Ֆրենսիս, Վաղահանա Դեղին:
 Դըռգանա Դեղին, Վաղահանս Մարկի, Դենի
 սենա Դեղին, Ֆրենսիս
 Դըռգանա Դեղին:
 Դըռգանա Դեղին:

Ձրենսիս

Դենիսենա Թեղին, Գրոյտ, Վաղահոս Մար-
կի, Դրոգանա Դեղին:

Ռամոն Ալիվու

Դրոգանա Թեղին, Թենիսենա Թեղին, Ձրենս-
իս, Վաղահոս Մարկի:

Աղայոյի Թեղեցիուհին

Դին Մայիսյան

Շռշա Գիլաս

Բանաքեռի Գիլաս

Տեղական

Փոշոտիչներն ստուգված չեն:

Բ ա 1

Վլաղիմիրովայտ

Լյուբովիայտ, Վլաղիմիրովայտ

Լյուբովիայտ

Լյուբովիայտ

Անադուլակայտ

Շպանկա, Անադուլակայտ

Շպանկայտ

Շպանկա, Անադուլակայտ

Տեղական

Փոշոտիչներն ստուգված չեն:

Միւտնիներ

Շալախ

Գյողջանաբաթ, Արութալիբի, Թարաբղա, Խոս-
ըրովշահի:

Գյողջանաբաթ

Շալախ, Արութալիբի, Թարաբղա

Թարաբղա

Խոսըրովշահի, Կարմիր Նախիճաննի, Շալախ,
Գյողջանաբաթ:

Խոսըրովշահի

Արութալիբի, Թարաբղա, Շալախ:

Արութալիբի

Թարաբղա, Խոսըրովշահի, Շալախ, Գյողջանա-
բաթ:

Հանըան

Գյոյ Բաղամ

Կարմիր Նախիճաննի

Փոշոտիչներն ստուգված չեն:

Սարի Բաղամ

Բալ Յուրիմի

Խարջի

Սալամներ



Դեղձային

Ռենդուտ Ալտանա

Կիրկ

Դեղձային, Կանաչ Ռենդուտ, Արտարել Նան-
սի, Աննա Շպետ, Իտալական Վենդերկա,

Վիկտորիա, Սովորական Վենդերկա:



ԿԵՐԱՊՈՒՏՎԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ Հ 2
ԱՆԱՀԵՄ

Ըենգլուստ կանուչ	Դեղձային, Ըենգլուստ Ալտանա, Իտալական վենդերկա, Դիլտոռիա, Սովորական / Շեն- գերկա:
Միքարել Նանսի	Վենդերկա Իտալական, Միքարել Նանսի
Աննա Շպիտ	Դեղձային, Ըենգլուստ Ալտանա, Կանաչ Ըեն- գլուստ, Աննա-Շպիտ, Իտալական վերգերկա:
Իտալական վեն- գերկա	Դեղձային, Ըենգլուստ Ալտանա, Կանաչ Ըեն- գլուստ, Աննա-Շպիտ, Իտալական վերգերկա:
Դիլտոռիա	Դեղձային, Կանաչ Ըենգլուստ, Աննա Շպիտ, Իտալական վենդերկա, Ելբլ, Ըենգլուստ Ալ- տանա, Սովորական վենդերկա:
Սովորական վեն- գերկա	Կանաչ Ըենգլուստ, Աննա Շպիտ, Իտալական վենդերկա:
Ալիբուխարա	Կանուչ Ըենգլուստ, Ալիբուխարա
Վազիր Ալի	Փոշոտիչները չեն ստուգված:
Բոպահան	
Գյոզջա	
Ելբլ	
Յեայ-Մալասի	
Քարալազյազի Տեղա- կան	
Ճանճուռ	
Մեղրու Ալիբուխարա	Փոշոտիչները չեն ստուգված:
Դեղնաշլու	
Տեղական	
Դիլիջանի Մամուխ	

Ինչ վերաբերվում ե դեղձենիներին, նրանք բոլորն ել ինք-
նափոշոտման յենթակա յեն, բայց խաչաձեի դեպքում ավելի լավ
արդյունք են առլիս, վորոնց հաջող կոմքինացիաները լրիվ ու-
սումնասիրված չեն:

ԴԻԱՆՅԱՆ ԹԵՎ ՍԱՆԱՑՅԱՆ

ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊՏՎԱՏՈՒ ԱՅԴՈՒՄ

Պաղտառու այգիների բերքի բարձրացումը և նրանց յերկարակյաց դարձնելը, ներկայումս մեր անհրաժեշտ խնդիրներից մեկն են:

Մեր պայմաններում ժողովրդական սննդի, կոնսերվի արդյունաբերության և եկամուրտի պահանջները բավարարենու գործում, մինչև նոր այգիների պաղաքները, հին այգիների նշանակությունը շատ մեծ են:

Հին պատղառու այգիների մեծ մասը շատ փոքր են և ցաքու ցրիվ, վորը և գժվարացնում ե բոլոր անհրաժեշտ աղբուժեալարկամներն անցկացնելը: Սակայն այդ արդելք չպետք ե հանդիսանալ Պաղառու այգիների բերքի բարձրացման համար անհրաժեշտ և կիրառել մի շարք աղբուժեալնիկական ձևոնաբերություններ:

Վորոնք են այդ անհրաժեշտ աղբուժեալնիկական ձևոնաբերությունները:

1. Այդու տակ յեղած հողի մշակությունը:

2. Չորացած և կիսաչորացած ծառերի (викорчевывание) խոտանումը:

3. Անըռուժելի, հիվանդ, չօրացած և կիսաչորացած ճյուղերի հեռացումը:

4. Հիմնական ճյուղերի և ընի մաքրումը մեռած կեղեսից, քար ու քսոսից և մամուռից:

5. Սաղարթի նոսրացումը:

6. Ծառի ընի և սաղարթի սրսկումը կամ ընի և հիմնական ճյուղերի ծածկումը կրուի:

Կանգ առնենք այդ աղբուժեանաբերություններից յուրաքանչյուրի վրա առանձին:

1. ԱՅԴՈՒ ՏԱԿ ՅԵՂԱԾ ՀՈՂԻ ՄՃԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵԵՎ, ՆՐԱ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Բանակով շատ ու վորակով բարձր բերք ստանալու և պաղառու ծառի նորմալ կյանքն ապահովելու համար անհրաժեշտ այգու տակ յեղած հողը մշակել և նորմալ պայմաններ ստեղծել արմատների գործունեյության համար, քանի վոր բույսն իր արմատների միջոցով վերցնում ե հողից բոլոր անհրաժեշտ սննդաբար նյութերը:

Դրա համար հողի մշակման միջոցով պետք ե նըս մեջ կուտակել անհրաժեշտ քանակությամբ սննդանյութ և խոնավություն: Այդ նպատակով անհրաժեշտ ե աշնանը բերքը հայտագե-

բուց անմիջապես հետո այգու հողը դութանով հերկել 15—20 սմ. խորությամբ, իսկ այն փոքր տարածությունը—փոքր բնի մոռ մնում և առանց հերկելու և զորն անհնար և դութանով հերկել, հարկավոր և նույն խորությամբ փոքրել բաների միջոցով, բայց շատ դուր, վրապիսդի ծառի արմատները չվնասվեն:

Աշնանը հերկված հողամասը թողնում են տուանց փոցիսելու մինչև դարուն, փորպեսդի նա ողափոխվի, խռնափություն կուտակի իսկ վաղ դարնանը, հենց վոր ձյունը հարվում և և հողը մի քիչ չորանում, հարկավոր և անմիջապես փոցիսել:

Ցեմենտ աշնանը հողը մի վրեմե պատճեռով հերկված չի յեղեր ապա անհրաժեշտ և հերկը կատարել վաղ դարնանը, ձյունը հարվելուց և հողի քեցը գալուն պես:

Վարից անմիջապես հետո հարկավոր և փոցիսել գիսելավոր կամ զիգզագ փոցիսով՝ հարթեցնելով հողի մակերեսը:

Ամառվա ընթացքում հողը պետք և պահել փուխը վիճակում, զրա համար հարկավոր և այգին ջրելուց և ուժեղ անձրիներից հետո հողը կուլտիվացիայի (վիլրեցում) յենթարկելը Յեթե այդ չարվի, հողը կամքանա և տեղի կունենա ուժեղ գոլորշիացում և կը դարպանան բազմատեսակ մոլախոտերը:

Բացի հողի մշակությունից, հարկավոր և նաև այգու տակ յեղած հողը պարարտացնել, առաջին հերթին վորպես պարարտանյութ հարկավոր և ողապորձել այն տեղական պարարտանյութերը, վոր կան տնտեսության մեջ, որինակ, գոմաղը, տնտեսության մեջ հավաքված թափթփուկները (КОМПОСТ), մոխիր և այլն. Կարելի յե ոգտագործել նաև հանքային պարարտանյութերը՝ գլխավորապես աղոտային, ֆոսֆորային և կալի. բոլոր տեսակի պարարտանյութերը հարկավոր և հողի մեջ մտցնել մշակման հետ միաժամանակ:

Պարարտանյութերը հավասարաշափ ցրում են հողի մակերեսին, ապա հերկում 12—15 սմ. խորությամբ:

Պարարտանյութը կարելի յե հողի մեջ մտցնել աշնանը կամ դարնանը:

2. ԶՈՐԱՅԱԾ ԾԱՌԵՐԻ ԽՈՏԱՆՈՒՄԸ (վակորչեա)

Ցեմենտ պաղատու այգում կան չորացած կամ կիսաչորացած հիմանդ ծառեր, վորոնց բուժումն անկարելի յե, ապա հարկավոր և այդպիսիները խոտանել, տեղն ու տեղն այրել կամ այգուց հեռացնել:

Այդպիսի ծառերից մենք վոչ մի ոգուա չունենք բացի վկասից, վորովհետև նրանք այլում մնալով, զանազան հիվանդությունների և միջատների բուն են դառնում և վարակում են առողջ ծառերն ու իջեցնում բերքի քանակն ու վարակը

Յ. ԱՆԲՈՒԺԵԼԻ ՀԻՎԱՆԴԻ ԶԲՐԱՑԱԾ ՅԵՎ ԿԻՍԱՉՈՐԱՑԱԾ ՃՅՈՒՂԵՐԻ ՀԵԽԱՑՈՒՄԸ

Մեր այգիներում համարյա վոչ մի ուշազրություն չի դարձավում ծառի սաղարթի խնամքի վրա, վորի հետեանքով ծառերի սաղարթը գտնվում է շատ վատ վիճակում—ունեն շատ չորուկներ, կոսորդուծ և հիվանդ ճյուղերու

Այս բոլորը հետևանք և շատ ուժեղ սավերի, ցրահարության, տարբեր տեսակի հիվանդությունների ու վկասատառների և վոր կարմարն և, մեր անփույթ և անինամ վերաբերմունքի:

Այսպիսի հիվանդ, չորացած և վկասված ճյուղերն անհրաժեշտ և անմիջապես կարել-հեռացնել այլուց, կամ այլեւ

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՅԵՎ. ԲՆԻ ՄԱՐՐՈՒՄԸ ՄԵԽԱԾ ԿԵՂԵՎԻՑ, ՔԱՐՄԱՔԱՌԻՑ (լիշայնիկօն) ՅԵՎ. ՄԱՄԱԽԻՌԻՑ

Մառի յերկարակեցությունը խոշոր չափով կախված և բնի և հիմնական ճյուղերի կեղենի ամուր և առողջ լինելուց:

Մառի կեղել տարեց տարի հնանում և, աստիճանաբար նրա արտաքին շերտը մերժում ե:

Հին, մեռած շերտերում, վորոնք գտնվում են ծառի բնի և հիմնական ճյուղերի վրա, լինում են բազմաթիվ ճեղքվածքներ, ուր բուն են դնում զանազան հիվանդությունները և վկասատառները, վորոնք հետազայում վկասում են նոր առաջացած կենդանի շերտերին:

Այս իսկ պատճառով անհրաժեշտ և ամեն տարի ծառի կեղել մաքրել մեռած մասերից, նորմալ պայմաններ տալով ծառին նրա անեցողության և զարգացման համար:

Կեղենի մաքրումը լավ և կատարել աշնանը, տերեւաթափից հետո, իսկ յեթե այդ աշխատանքն աշնանը չի կատարված, առա անհրաժեշտ և կատարել վաղ զարնանը:

Այդ աշխատանքը կատարվում և հատուկ դործիքների միջոցով հավաքված մեռած կեղենին անմիջապես մեղքեներով դուրս և հանվում այգուց, կամ տեղն ու տեղն այրվում, վորպեսզի այդին ապահովված լինի նոր վարակումներից: Կեղենի մաքրումը նպատակահարմար և կատարել խոնավ ժամանակ—անձքեներից

հետո, կամ անմիջապես ձյունը հալվելուց հետո, վորովհետև այդ ժամանակ ծառի կեղեց լինում և փափուկ և ավելի հեշտ ու լազ և կատարվում այդ աշխատանքը:

5. ՍԱԴԱՐԹԻ ՆՈՍՐԱՑՈՒՄԸ

Սաղարթի նոսրացման աշխատանքների վրա ահրաժեշտ և լուրջ ուշադրություն դարձնել, վորովհետև գլխավորապես սրանից և կախված բերքի քանակն ու զորակը Մեղ մոտ գոնե այս աշխատանքը համարյա չի տարվում և այդիները մասնված են ինքնահոսիր, այդ ողատճառով բերքը լինում և չնշին քանակով և ցածր վորակով:

Շատ փարթամ աճող ծառերն ունենում են խիտ սաղարթ վորի հետևանքով շիվերի դոյցումը թուլանում և պտղատու սաղարթի մեջտեղում և այդպիսի պտղաշիվերը դարձանում են աննորմալ, ունենում են մանր, անդույն և հիվանդ պառուղներ, վորը և ցածրացնում և բերքի տպանքային հատկությունը:

Այս իսկ պատճառով անհրաժեշտ և ամեն տարի վերանայել ծառի սաղարթը և նոսրացման միջոցով տալ նրան լույս, արև և որ նոսրացման աշխատանքը հարկավոր և կատարել վաղ գարւնանը, մինչև ծառերի արթնանալը, այսինքն հյութաշարժության սկիզբը:

Այս աշխատանքը հարկավոր և կատարել աստիճանաբար և և շատ զգույշ վորպեսզի հնարավոր չափով չիանդարվի արմատային սիստեմի, վերերկրյա մասերի նորմալ դարձացման ու աճման ռեժիմը:

Բացի այդ, մեծ քանակությամբ վերք հասցնելով ծառին, մենք կարող ենք առաջ բերել հոռաշիվեր, վորն ի հարկե ցանկալի յերեսույթ չեն:

Սաղարթի նոսրացման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ և դեկավարվել հետևյալ պայմաններով:

ա) կտրել այն բոլոր ճյուղերը, վորոնք շվագված են ուժեղ ճյուղերով.

բ) հեռացնել այնպիսի ճյուղերը, վորոնք աճում են սաղարթի մեջտեղում և խանգարում են կատարվող աշխատանքներին.

գ) հեռացնել այն ճյուղերը, վորոնք ունեն խաչաձև դասավորում և շիման մեջ են իրար հետ, կամ թե աճում են զուգահեռ մեկ կետից, այս դեպքում պիտի հեռացնել թույլ աճող ճյուղը, թողնելով առողջը.

դ) հեռացնել այն հոռաշիվերը, վորոնց չե կարելի ոգտագործել վորպես մայք՝ ճյուղ սաղարթի պակասը և բաց տեղերը լրացնելու նպատակով:

Այս բոլոր աշխատանքներից հետո անհրաժեշտ ե բոլոր վերքերը ծածկել յուղաներկով, իսկ յիթե այդպիսին չկա, կարդիլ յե ծածկել կրի և կալի շաղախով, այլ կերպ, անձրեների, ինչպիս և արեի այրվածքների հետեանքով կարող են առաջանալ փառում և տարրեր տեսակի հիվանդություններ

Վորպեսդի վերը հիշված աշխատանքներն ընթանան նորմալ և լինեն վորպակով բարձր, անհրաժեշտ և լուրջ ուշադրություն դարձնել հետեալ խնդիրների վրա

1. Ծյուղը կտրելիս յերկաք չորուկ չպետք ե թողնել, վարով հետև ծառը հնարավորություն չի ունինա այդպիսի վերքը ծածկելու:

2. Կողմանակի ճյուղերը կտրելիս չպետք ե թողնել ողակի համելվածքներ, վորոնք գտնվում են ճյուղի հիմքում, այս զեպքում վերքը չի ծածկվում և հետազյում առաջանում է փըտմածք, վորը և տեղիք և տալիս փշակի:

3. Մ' եծ ճյուղը կտրելիս հարկավոր ե առաջին հերթին սղոցել ներքեմի մասից և ապա վերելից, վորպեսդի ամելորդ և անտեղի վերքեր չխացնենք ծառին:

4. Սղոցելուց հետո անհրաժեշտ և ծառին հասցրած բոլոր վերքերը շակել այդու սուր դանակով, վորպեսդի վերքը կտրել ժամանակում առողջանա:

5. Հնարավոր յեղած սահմաններում քիչ և տրամադրով փոքր վերքեր պատճառել ծառին:

6. Բաց և բոլոր տեսակի վերքերը հարկավոր ե ծածկել յեղանյութով կամ կրի և կալի շաղախով:

7. Կտրված բոլոր ճյուղերը աշխատանքի վերջին անմիջապես հեռացնել այդուց:

ԵԵ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՒԵԼՔ ԲԵՐՔԸ ՎՆՍՍՍՈՒՆԵՐԻՑ ՅԵՎ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պտղատու այգիների վնասառուներն ու հիվանդությունները հաճախ խլում են մեր բերքի դպալի տոկոսը. այդ պատճառով ել պտղաբուծական տնտեսության բերքատվության բարձրացման խնդիրներից մեկը պետք ե լինի՝ ապահովել նսասատուների և հիվանդությունների դեմ կիրառվող պայքարի միջոցառությունը.

Այս միջոցառումներն իրենց կտրդարացնեն և արդյունավետ կլինեն միայն այն գեղքում, յերբ պայքարը կտարվի ժամանակին և սխտոհմատիկի կերպով ու կը կրի համատարած մասսայական բնույթի Հակոբակ գեղքում այդ միջոցառումները կը կորցնեն իրենց արժեքը, քանի վոր մի այգում վոչնչացրած վնասատուները մերձակա այգուց կարող են տեղափոխվել և նորից վարակել այգին:

Հայաստանում պատաստ այգիների աշքի բնկնող վնասատուները և հիվանդությունները հնաևյալներն են՝

Հիվանդությունները

1. Կորիզավոր պատուղների ծակոտկեն բծավորություն
2. Դեղձենու գանգրուություն
3. Դեղձենու ալբացող
4. Սալորենու տերեների կարմրախոց
5. Պատուղների փոտումը
6. Մոխրագույն փառումը
7. Խնձորենու և տանձենու քուր
8. Խնձորենու և տանձենու ժանդը

Վատառատունները

1. Լվիճներ
2. Խնձորենու ծաղկակեր
3. Բրդոս բգեզ
4. Վուկեզոծ սինլիմի
5. Տանձենու զլխափողիկ
6. Խնձորենու ցեց
7. Խնձորենու պտղակեր

Այս հիվանդություններն ու վնասատուները ամեն տարի հսկայական վնաս են հասցնում, ժամանակին ու ճիշտ կերպով կազմակերպված պայքարը նրանց գեմ կապահովի բերքի թեքանակը և թե վորակը: Պաղասու այգիների վնասատուները և հիվանդությունները մասսայականորեն զարգանում և տարածվում են գարնան և ամառվա ընթացքում: Զմռանը և վաղ գարնանը նրանց սազմերը զեր քնած, թմբած դրության մեջ են լինում: Յեկ հենց այդ ժամանակ և, վոր պետք և վոչնչացնենք հիշյալ սաղմերը: Այդպիսով վոչնչացրած կլինենք այն ոջախները, վորոնք պատճառ են զառնում նրանց հետագա մասսայական տարածմանը: Այդ պատճառով ել պայքարը վնասատուների և հիվանդությունների գեմ պետք և սկսել վաղ գարնանը վաղ գարնանից պատաստ այգում պիտօք և կտարվեն մի կողմից այն աշխատանքները, վորոնք ուղղված են ճիշված վնասատուների և հիվանդությունների ձմեռող ձևերի գեմ և մյուս կողմից

պետք և տարվեն այն կուլտուր-տնտեսական աշխատանքները. վորոնք ծառի աճեցման համար լավ պարաններ են ստեղծում, այսպես որինակ՝ հողը վարելը, ծառի կեղեփի մաքրելը, չորտակեները կարառելը, հողի պարաբռացումը, ջրելը և այլն: Այս աշխատանքները մի կողմէց վոչնչացնում են այս կամ այն ֆաստուցին և մյուս կողմէց բարելավում ծառի աճեցման պայմանները, և հետեւապես մեծացնում են նրանց դիմացկունությունը հիվանդությունների գեն:

Առաջին աշխատանքը, զոր մենք պատղառու այլում պետք և կարաբնելք վաղ գարնանը, զա չորուկները և հիվանդ ճյուղերը կտրելն եւ. վորից հետո անմիջապես, առաջացած վերքերին պետք և քսել ձեթից և կալմից կամ ոխոայից պատրաստված մածիկ:

Միաժամանակ պետք և հովագել ծառի վրա մնացած չորացած պառազները, կտրած չորուկները, հիվանդ ճյուղերը և գետնին թափած պառազներն ու տերենները և վառեր:

Այսուհետև պետք և անցնել ծառերի բները մաքրելու և կիր քսելու աշխատանքներին: Նախ քան այդ աշխատանքն սկսելը, ծառի տակ, բնի շաւը վրա փռում են շոր և բռնն ու հաստ ճյուղերը մետաղյա խողանակով զգուշ մաքրում են մեռած կեղեփից: Այդ մեռած կեղեփի տակ եւ, վոր ձեռում և պատղակերի թրթուռը, ծաղկակերի բզեզը, ինչպես և ուրիշ ֆաստառուների:

Հեռացնելով այլպիսի մեռած կեղեփի կտրքները, մենք դրանով վոչնչացնում ենք ֆաստառուներին, կամ նրանց թափում ենք շորի վրա և հետո հավագում ու վասում:

Բները և հաստ ճյուղերը մաքրելուց հետո պատրաստում ենք կը և կավի խառնուրդ ու հաստ վրձինով քսում ենք բնին ու հաստ ճյուղերին, լցնելով բռլոր ձեղվածքներն այդ խառնուրդով կիրը և կավը պետք և վերցնել հետևյալ հարաբերությամբ. 12 լիոր ջրին (մեկ դոչյլ) 2 կիլո չհանգրած կիր, 2 կիլո կավ և զրան ավելացնում են 600 գրամ յերկաթի արջասպ: Վերջինս սպանում է սնկերի ձեռուղի սպորները:

Տառերի կը քսելը (սպիտակեցնելը) ունի նաև այն նշանակությունը, վոր զրա չնորհիվ ծառերն այնքան չեն ֆաստում արևի ազդեցությունից:

Կրով սպիտակացումն անհրաժեշտ և ասանձնապես յերբ տասարդ ծառերի համար:

Հետեւյալ աշխատանքը, վորը պետք և կատարվի վաղ գարնանը մինչև բողբօշների բացվելը (յեթե ուշ աշնան այդ չե կատարված), զա ծառի սրսկումն ե 5 տոկոսանի յերկաթի արջասպով: Դրա համար 600 գրամ յերկաթի արջասպը լուծում ենք 12 լիոր

Ջրի մեջ և այդ լուծույթով սրսկում բոլոր ծառերը: Այդ սրսկում ուղղված և սնկային հիվանդությունների ձմեռող սպառների և լվիճների ձմեռող ձևերի դեմ:

Հետեւյալ սրսկումը կատարվում և 0,75% անոց բորդոյան հեղուկով, զորի մեջ ածում են նաև փարիզյան կանաչ: Այս սրսկումը կատարվում և պաղասու ծառերը ծաղկելուց անմիջապես հետո և ուղղված և այն հիվանդությունների ու վնասատուների դեմ, զորնք սկսում են վնասել այդ ժամանակ, ինչպես ինձորենու ցեցն և կամ նոր դուրս յեկող, մատադ տերեները վնասող ձակոտկեն քավուությունը և այլն:

Գարնանը տերեները զեռ շատ նուրբ են, այդ պատճառով փարիզյան կանաչը և պղնձի արջասպը քիչ են գերցնում: այսպես 12 լիար (1 գուլ) ջրին 8 գրամ փարիզյան կանաչ, 90 գրամ պղնձի արջասպ և 90 գրամ չհանգցրած կիր:

Դեղձենիները սրսկելիս փարիզյան կանաչ չպետք և խառնել բորդոյան հեղուկին, զորովհետեւ նրանց տերեները շատ նուրբ են և կարող են փարիզյան կանաչից այրվածքներ ստանալ:

Բորդոյան հեղուկը պատրաստելու համար պղնձի արջասպը պիտի լուծել ջրի մեջ, փայտե ածանի, տակառի մեջ (յերկաթի ամանի մեջ չի կարելի լուծել), մյուս կողմից համապատասխան քանակությամբ չհանգցրած կիրը հանգցնում են քիչ քանակությամբ ջրի մեջ և յերբ նա վերածվում է փոշու, ավելացնում են ջուր, այսպես կոչվոծ կրակաթ ստանալու համար: Այդ կրակաթը, քիչ քիչ լցնում են պղնձի արջասպի լուծույթի վրա փայտե ձողիկով խառնելով, մինչև վոր կստացվի միատեսակ յերկնադույն հեղուկ:

Ճիշտ պատրաստած բորդոյան հեղուկի մեջ լակուսի կապույտ թուղթը չպիտի կարմրի և վոչ ել կարմիրը կապտի, այլ պիտի ստացվի կապտավուն գույն: Յեթե լակուսի թուղթ չկարելի յի բորդոյան հեղուկն ստուգել դանակի կամ մեխի ջոյով: յերկաթը բորդոյան հեղուկի մեջ իջեցնելուց չպիտի կարմրի:

Սրսկելուց առաջ պետք է բորդոյան հեղուկին ավելացնել փարիզյան կանաչ: Դրա համար նախորոք քիչ քանակությամբ ջրի մեջ շաղախում են փարիզյան կանաչը և ապա այն բաց անում բորդոյան հեղուկի մեջ:

Սրանք են վաղ զարնան վնասատուների և հիվանդությունների դեմ գործադրվող քիմիական պայքարի միջոցները: Բացի զբանից, անհարժեղություն կամ դեմք ունեն բերքի պաշտպանման գործում վերևում հիշված ազրհձեռնարկումները և նըանց լրիվ կիրառումը:

Մ. Ա.Վ.Ա.Դ.Ց.Ց.Ա.Ն

ՍԻՄԵՐԵՆԿՈՎՇԶԻՆԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ

